



ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Էմմա Աշոտի Շավառյանի «Հարկային քաղաքականության ազդեցության գնահատումը << մակրոտնտեսական ցուցանիշների վրա » թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ գրնորդ ազգային գույքագիր. թեկնածու, դոցենտ, Լիանա Խաչատրյան՝ գրնորդ ազգայիր. թեկնածու, դոցենտ, Եվգենյա Հակոբյան՝ գրնորդ ազգայիր. թեկնածու, Ռոբերտ Սարինյան՝ գրնորդ ազգայիր. դոկտոր, պրոֆ., Բելլա Գաբրիելյան՝ գրնորդ ազգայիր. թեկնածու, դոցենտ, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գևորգ Հարությունյան՝ գրնորդ ազգայիր. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ գրնորդ ազգայիր. թեկնածու, Մանուշ Մինասյան՝ գրնորդ ազգայիր. թեկնածու, դոցենտ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման հիմնական գործիքներից մեկն է, որի արդյունավետությունից է կախված ոչ միայն պետական բյուջեն, այլև համախառն ներքին արդյունքի աճը, առևտրային հաշվեկշռի բարելավումը, զբաղվածության աճը և քաղաքացիների բարեկեցությունը: Չնայած վերջին տարիներին նկատվել է ՀՆԱ-ի արտահանման նկատելի աճ, որը պայմանավորված է հիմնականում արտաքին գործոններով, երկիրը կանգնած է ներքին զարգացում ապահովելու զգալի խոչընդոտների առջև: Հարկային քաղաքականությունը կարևոր դեր է խաղում դրանց հակազդելու գործում: Հայաստանի հարկային քաղաքականությունը, որպես տնտեսական ռազմավարության կարևոր բաղադրիչ, մեծ ազդեցություն ունի երկրի մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ինչպես՝ տնտեսական աճ, աշխատաշուկայի իրավիճակ, գնաճ, պետական բյուջեի եկամուտներ

և ծախսեր, ինչպես նաև աղքատության մակարդակ: Հարկային քաղաքականության ճիշտ գնահատումը կարող է մեծապես նպաստել պետական և մասնավոր ոլորտների համատեղ աշխատանքին, բարելավել մակրոտնտեսական ցուցանիշները՝ ապահովելով երկարաժամկետ կայուն աճ: Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված է արտաքին գործոններից, իսկ երկրի ներսում հարկային համակարգի արդյունավետությունը որոշում է, թե որքանով է հնարավոր ձգտել դրական տնտեսական ազդեցությունների: Այս ամենով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է գնահատել Հայաստանի հարկային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վրա և բացահայտել հարկային քաղաքականության հետագա զարգացման ռիսկերն ու հնարավորությունները: Նշված նպատակի հրագործման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- Հետազոտել հարկային համակարգի դերը, գործառույթները և բովանդակությունը,
- Վերլուծել հարկային համակարգի և տնտեսական աճը բնութագրող առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունները,
- համակարգել հարկերի գործառույթները փոխակերպվող տնտեսություն ունեցող երկրների համար,
- Վերլուծել << հարկային մուտքերի դինամիկան և ժամանակակից միտումները,
- ուսումնասիրել << հարկային քաղաքականության հնարավոր սցենարները,
- Ենելով հարկային համակարգի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունից՝ ձևավորել հարկային մուտքերի վերին և ստորին սահմանները,
- Ներկայացնել հարկային բարեփոխումների առաջնահերթ խնդիրները և դրանց լուծման ուղիները,
- գնահատել հարկային եկամուտների և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների և վերլուծությունների հիման վրա ներկայացվել են հետևյալ հիմնական արդյունքները և

նորույթները:

• Գնահատվել է հարկման մակարդակների միջակայքը: Բացահայտվել է, որ հարկերի խթանից գործառույթը ուղեցույց է միջակայքի վերին սահմանի համար, իսկ ֆիսկալ և կարգավորիչ գործառույթները ուղեցույց են հարկման մակարդակի միջակայքի ստորին սահմանի համար:

• Հիմնավորվել է, որ հարկային քաղաքականությունը, ենելով հարկերի խթանից գործառույթից, պետք է նպաստի տնտեսական աճը բնութագրող 4 փոխկապակցված նպատակային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի օպտիմալ աճի, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, գրաղվածության աճին և գների կայունության ապահովմանը:

• Կոռելյացիոն և էկոնոմետրիկ գնահատման միջոցով մշակվել է մոդել և բացահայտվել է հարկային եկամուտների ուժեղ փոխկապակցություն միջին աշխատավարձի հետ, և չափավոր կախվածություն՝ արտահանման և տնտեսական ակտիվության ցուցանիշի հետ:

• Հումքի արտահանման մաքսատուրքի սահմանման համար մշակվել է մոտեցում և առաջարկվել է որպես ուղեցույց կիրառել բանաձև՝ ձևավորված տվյալ արտադրանքի գնի մեծագույն և նվազագույն արժեքների վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Հարկերի դերի և գործառույթների համակարգումը»** վերտառությամբ գլխում ուսումնասիրվել են հարկերի դերը և գործառույթների փոխկապակցությունները: Հարկերի դերը, բովանդակությունը ներկայացվել են այլուսակի տեսքով՝ գործառույթները, ինչպես նաև հիմնավորվել է, որ արդյունավետ ֆիսկալ գործառույթը կարող է նպաստավոր լինել ոչ միայն հարկերի հավաքրման, այլև՝ տնտեսության աճի տեսանկյունից:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հարկային համակարգի մակրովնդեսական ցուցանիշների փոխկապակցվածությունը»** գլխում հիմնավորվել է, որ հարկային քաղաքականությունը, ենելով հարկերի խթանից գործառույթից, պետք է նպաստի տնտեսական աճը բնութագրող 4 փոխկապակցված նպատակային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի օպտիմալ աճի, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, գրաղվածության աճին և գների կայունության ապահովմանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Հարկային եկամուգների ազդեցությունը դնդեսական աճի վրա»** գլխում ձևավորվել է **« հարկային քաղաքականության**

առաջնահերթ խնդիրը, այն է. պատրաստի արտադրանքի արտահանման և ռազմավարական բնույթի արտադրանքի պայմանների հնարավորինս բարելավում՝ հաշվի առնելով հարկային մուտքերի դինամիկայում չնվազման հիմնախնդիրը և «հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը: Իրականացվել է հարկային եկամուտների փոխկապվածությունների կոռելյացիոն և էկոնոմետրիկ վերլուծություն:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսության 1.3' «Հարկային եկամուտների համակարգը ԵԱՏՄ երկրներում և Վրաստանում» վերտառությամբ գլխում ցանկալի կլիներ, որ ատենախոսի կողմից հիմնավորվեր, թե ինչով է պայմանավորված ԵԱՏՄ երկրների հետ Վրաստանի համեմատությունը, կամ էլ գոնե որպես խնդիր ձևակերպվեր այն: Նշենք նաև, որ ԵԱՏՄ երկրների հետ <<գործազրկության ցուցանիշների համեմատության ժամանակ շատ կարևոր էր ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանության տարբերությունների մասին նշումը, որը ևս ցանկալի կլիներ, որ արտացոլված լիներ աշխատանքում:
2. Ատենախոսության 64-րդ էջում ներկայացված SWOT վերլուծությունում, մեր կարծիքով, հարկ է ավելացնել ակնկալվող աճի որոշ պայմանականություններ՝ հարկային եկամուտների աճը տեղի կունենա միայն այն դեպքում, եթե տնտեսությունն ունենա արդյունավետության բավարար պաշար, համարժեք կառավարման և վերահսկողության համակարգ: Բացակայում է նաև բյուջետային կարգապահության և հարկային ծախսերի արդյունավետության կապը տնտեսական աճի հետ: Հարկային քաղաքականության կանխատեսելիության պակասը, մեր գնահատմամբ, թույլ կողմ է, ինչը ներդրողներին խանգարում է երկարաժամկետ պլանավորումների ժամանակ: Այս շարքում հեղինակի կողմից չի ընդգծվել հարկային արտոնությունների հնարավոր չարաշահման ռիսկը, հատկապես տնտեսության՝ այս առումով խոցելի ոլորտներում:
3. Ատենախոսությունում հեղինակը հաճախ է մեջբերումներ կատարել իր նախկինում հրապարակված հոդվածներից, արդյունքում երբեմն վերջին մի քանի տարվա փոփոխությունները դրանք դարձրել են ժամանակավեպ (օրինակ էջ 57), մեկ այլ հատվածում վերլուծել է 2023թ ցուցանիշները՝ ուղիղ հղում անելով 2021թ հրապարակված հոդվածին (էջ 57) կամ հոդվածին ուղիղ հղումով գրել է «Ատենախոսությունում համեմատվել են» (էջ 74): Նշենք նաև, որ ատենախոսությունում հղումներ կատարելով նախկինում հրապարակված

հոդվածներին, հեղինակը հաճախ դրանք ներկայացնում է 1-ին դեմքով՝ օրինակ՝ էջ 36-ում, թվով 71-րդ հղումը, էջ 57, թվով 98 րդ հղումը և այլն:

4. Ատենախոսությունում առկա են թվային տվյալների ցրվածություն, մասնավորապես՝ որոշ տվյալներ ներկայացված են 2024 թ դրությամբ՝ աղյուսակ 1.2.1՝ էջ 33, որոշները՝ 2022 աղյուսակ 1.3.2՝ էջ 43, որոշ մասը՝ 2023 աղյուսակ 1.3.4 և այլն: Աշխատանքի գիտական արժեքն ավելի կրարձրանար, եթե ներկայացված և վերլուծված թվային տվյալները լինեին նույն ժամանակահատվածի համար:

5. Աշխատանքում ընտրանքային կարգով ստուգված թվային տվյալների որոշ անճշտություններ են արձանագրվել, մասնավորապես՝ էջ 33, էջ 41, էջ 64, էջ 62 և այլն: Երբեմն ցուցանիշները բերված են առանց ժամանակաշրջանի նշման (օրինակ՝ աղյուսակ 1.3.1-ում չի նշվում, թե ո՞ր տարվա հարկային դրույքաչափերն են ներկայացված և այլն):

6. Ատենախոսությունը զերծ չէ տեխնիկական, լեզվաոճական թերություններից, առկա է գերատեսչությունների հստակեցման խնդիր (օրինակ՝ ոչ թե ազգային վիճակագրական ծառայություն, այլ՝ վիճակագրական կոմիտե, պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարությանն առընթեր չէ և հարկային քաղաքականությունը մշակում է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ էջ 5-6 և էջ 85), հարկերի գործառույթները ստացել են «հարկային համակարգի կարգավորման գործառույթներ» ձևակերպումը՝ էջ 13, հարկերի գործառույթները գործառույթում ծառայությունների ձևակերպումը՝ էջ 23, սիսալ է գործածված էջ 34-ի օրենսդրությունը՝ աղյուսակ 1.2.1-ի հղման մեջ նշվում է, որ ատենախոսությունում չի պահպանվել: Աղյուսակ 1.2.1-ի հղման մեջ նշվում է, որ աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա, սակայն էլեկտրոնային հղումը տրված է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական էջին:

ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 7 (յոթ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը և խնդիրներին:

Էմմա Աշոտի Թավադյանի «Հարկային քաղաքականության ազդեցության գնահատումը << մակրոտնտեսական ցուցանիշների վրա» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 7 (յոթ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են <<-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է << ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (16.10.2025թ., արձանագրություն թիվ 13):

**<< ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. Տի
առաջատար գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ**



Բ.Վ.Գաբրիելյան

**<< ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. Տի
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝**



Մ.Մ.Մինասյան

<< ԳԱԱ Մ. Քոթանյանի Տի առաջատար գիտաշխակող, գնումագիրության թեկնածու, դոցենտ Բ.Գաբրիելյանի և նոյն ինստիտուտի ավագ գիտաշխակող, գնումագիրության թեկնածու, դոցենտ Մ.Մինասյանի սկրորագրությունների իսկությունը «հասկապում եմ».

**<< ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. Տի
գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու
«20» հոկտեմբերի, 2025թ.**



Ե.Ա.Հակոբյան

